

Բ Ե Ջ Մ Ե Վ Է Պ

ՕՐԱԳԻՐ

ԲՆԱԿԱՆ, ՏՆՏԵՍԵԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՏԵՆԵՐ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 17.

1845

ՕԳՈՍՏՈՍԻ 1.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Կարգ հոդերու :

ՆԱԽ և առաջ պէտք է գիտնալ որ գետինը վերէն դէպ 'ի վար շիտակ կտրելով փորելու ըլլաս, կամ ան լեռներուն հողերն որ բնական կերպով շիտակ կտրած են՝ դիտելու ըլլասնէ, կրտսնես որ հողերուն մէջ կարգ կայ. այսինքն ամէն տեսակ հող եւ կածին պէս խառնափնդոր կեցած չեն, հասկա կարգաւ վրայէ վրայ որոշ ուրոշ զատուած ու իրարու զուգահէ՛ւռական դրքով դրուած են : Եւ կարգերուն վրայ խիստ որոշ կերէնան մեծ մեծ բաժանմունքները իրենց գոյնովը, թանձրութեամբն ու կազմութեամբը, և անոնց մէջն ալ կան մանր բաժանմունքներ : Եւրաքան չիւր կարգերուն մէջ կը գտնուին փայտի՝ բոյսի՝ տերեւի կտորուանքներ, ցամաքային կենդանեաց ոսկորներ, ծովային կենդանեաց պատկերը իրենց վրայ տպաւորուած, ժժմունքներու կեղւններ, ձկներ, ևն : Եւստի աս կարգերը չէ թէ միայն նիւթով իրարմէ կրտարբերին, հասկանալ իրենց մէջի կենդանեաց ու բուսոց մնացորդներովը, որ շատ անգամ իրարու նման չեն :

Եւ հողերու կարգերը գրեթէ միշտ քարացած են, կամ քարի պէս պընդացած. կենդանեաց ու բուսոց մնացորդներն ալ նոյն քարացած կարգերուն մէջ թաղուած : Հիմա խնդիրն ան է թէ աս կենդանիներն ու բոյսերը ինչպէս կը գեր են ան քարերուն մէջը մտնել : Եւ խնդիրը չենք կրնար լուծել՝ ինչուան չղենք թէ ան քարերուն կամ հանքերուն կարգերը աւտենով կակուղ են եղեր, և բոյսերն ու կենդանիները հոն տեղուանքը թաղուելէն ետքը՝ կամաց կամաց քարացեր են : Եւրեմն ասոր մէջ երկու գիտելու բան կայ. մէյմը թէ հողերուն կարգ կարգ կենալուն պատճառն ինչ է, և երկրորդ՝ թէ կենդանեաց ու բուսոց կտորուանքը ան քարերուն մէջ ինչպէս մտեր ու մնացեր են :

Եւ ընդ խնդիրը հիմակուան երկրագէտներուն վարդապետութիւնը խիստ աղէկ կը մեկնուի : Տեսնուած է շատ անգամ որ անձրեւներու յորդութիւն ետքը՝ երբոր ջրերը սաստկութեամբ լեռներէն վար կիջնան, իրենց բռնութեանը համեմատ՝ կառնեն կը

տանին քարի կտորուանքը, խիճը, աւազը, կաւը, տեսակ տեսակ հողերը, ծառի փայտի կտորուանքը, կենդանեաց սատակներ, ոսկորներ և այլն : Այսչափ տեսակ նիւթերով ծանրացած ջուրը երբոր շիտակ դաշտի մը երեսը կը տարածուի, բնական է որ իր ոյժը տկարանալով՝ կամաց կամաց անանկ կը լլայ որ չկրնար այնչափ տեսակ նիւթը քշել ու տանիլ : անոր համար առջի բերան էն ծանր նիւթերը, այսինքն մեծ մեծ քարի կտորուանքը դաշտին վրայ կը մնան : Ետքը ջրին ոյժը աւելի տկարանալով, չէն կրնար խիճերն ալ առաջ երթալ, ու առջի կեցած քարերուն վրայ կը նստին կրկենան : Ետքը աւազը խիճերուն վրայ կիջնայ, անոր վրան ալ կաւը, և այլն : ասանկով ամէն տեսակ նիւթ իրենց ծանրութեանը համեմատ վրայէ վրայ կը նստին : այսինքն էն ծանր նիւթերը տակը, և անոնց վրան թեթեւները իրենց կարգաւ : իսկ կենդանեաց ու բուսոց մնսուներն ալ իրենց ծանրութեանը համեմատ ան հողերուն մէջ կը թաղուին :

Եւ մանապէս երբոր պղտորած ջրերը լճի պէս լեցուին տեղ մը ու հանդարտ կենան, իրենց մէջի եղած հողի մնսունքը, այսինքն դիրտը, կամաց կամաց տակը կիջնայ : բայց ինչպէս որ ըսինք, իրենց ծանրութեանը համեմատ նախ աւազը, ետքը կաւը, ետքն ալ ուրիշ նիւթերը կարգաւ ջրին տակը կը նստին : Այս կերպով ալ կը տեսնենք որ դիրտերը կարգ կարգ կրկենան՝ իրենց ծանրութեանը համեմատ, և իրենց դիրքը հորիզոնական կը լլայ, ամէն կարգերն ալ իրարու զուգահեռական : Ինչպէս որ հետագայ նիւթական փորձով ալ կը տեսնես : Օրոր օրինակ, առ երկաթի փոշի, աւազ, թրիփոլի, մանեղիա, Դոխիւր, և այլն, որչափ որ կուգես : ասոնք ամէն ալ մեծկակ շիշի մը մէջ դիր, վրան ալ շատկեկ ջուր լեցուր : շիշը այնչափ շարժէ որ ասոնք իրարու հետ աղէկ մը խառնուին ու պղղ

տորին, ետքը դիր ամանը որ անշարժ կենայ, և մէջի նիւթերը տակը նստին ու ջուրը զտուի : Ան ատեն կը տեսնես որ տակը նստած դիրտը կարգ կարգ է : ամէն նիւթ զատ զատ վրայէ վրայ կեցած էն առանց իրարու հետ խառնուելու : ամէնուն դիրքը իրարմէ հաւասար հեռաւորութիւն ունի, և ամէնն ալ դէպ ի հորիզոն շտկած են :

Այս երկու բացատրութեամբ կը մեկնեն երկրաբանները երկրիս կարգերը : մէյ մը թէ ջրերու վազուածքէն ձևացած են, և երկրորդ՝ թէ ջրերու դիրտերէն ձևացած են : Կըսէ ամէն անգամ որ երկրիս վրայի ջրերը պղտորեր են, մէջի դիրտը կամաց կամաց տակը նստելով՝ երկրիս երեսը կարգ կարգ հողեր նստեր են : Բայց թէ ինչ պատճառ կրնան ջրեր պղտորիլ՝ վերը երկու խօսքով զուրցեցինք, հոս ալ քանի մը բառով աւելի բացատրենք :

Ինչպէս որ ուրիշ տեղ ըսինք՝, լեւները ձևացած են երկրիս կեդրոնական ջերմութէն : և ինչպէս որ հողերուն կազմութենէն կիմացուի՝ ամէն լեռներուն ձևանալու ժամանակը նոյն չէ, հապա մէկը առաջ՝ մէկաւ ետքը եղած են : Հիմա գետնի ջերմութիւնը գտեր է մէկ չափ մը բարեխառնութեան, անոր համար լեռներն ու ցամաքներն ալ որ հիմա կը բարձրանան՝ կամաց կամաց անդգալի կերպով կը բարձրանան, անանկ որ ամէն օր չդիտողը չկրնար իմանալ : Բայց այսչափ մեծամեծ լեռներու գօտիներէն ու բարձր լեռներէն կերևայ որ ատենով ներքին տաքութիւնը խիստ սաստիկ է եղեր : անոր համար լեռներն ալ յանկարծ յանկարծ կը բարձրանան եղեր : Յանկարծ ըսելով պիտի հասկընաս, թէ հիմա որ տարուան մէջ հագիւ մէկ երկու ոտնաչափ կը բարձրանայ գետինը, ան ատենները էն բարձր լեռներն ալ կը

բարձրանան եղեր մէկ երկու ժամուան կամ աւելի քիչ ատենի մէջ : Եւսկէ ինչ կը հետեւի . կը հետեւի որ ծովուն կամ ջրերուն տակէն յանկարծ լեռ մը ելլելով, բոլոր վրայի ջրերը տակն ու վրայ կը լլան, մեծ շարժումներ կունենան, կը խռովին, կը պղտորին, ասոցիս անդին բռնուածք վազելու ատեն ինչ որ գտնեն իրենց դիմացը, բլուր, թումբ, հողի՝ աւազի կոյտ, ևն, տակէն կառնեն կը խռովեն կը խառնեն, ինչուան որ լեռան բարձրանալը դադրի . ան ատեն ջրերն ալ իրենց շարժումէն հանդարտելով, կամաց կամաց անոնց մէջի դիրտը կընստի երկրիս երեսը . որով կը ձևանան կարգ կարգ հողերը, ինչպէս որ վերը օրինակով բացատրեցինք, և ամէն մէկ բաժանման մէջ կը մնան կենդանիներ, բոյսեր, ծառեր, և այլն : Եւսկէ կանցնի, նոր խռովութիւն մըն ալ կեւլէ, նոր լեռներ կը տնկուին . դարձեալ առջի կերպով ջրերը կը խռովին ու կը պղտորին, և առջի կարգերուն վրայ նոր նոր կարգեր կը ձևանան : Եւսանկով քանի անգամ որ երկրաբանական մեծամեծ փոփոխութիւններ եղած են երկրիս վրայ, հողերուն կարգերն ալ անոր համեմատ շատցած են :

Եւսչափով իմացուեցաւ որ հողերուն կարգ կարգ բաժանմունքը ջրերէն առաջ կուգայ . անոր համար ասոնք կըսուին ջրային կամ դիրտ հողեր . իսկ ջրեմուծեան պատճառաւ բարձրացած հողերը կըսուին հրային հողեր, որ կարգ կարգ բաժնուած չեն ըլլար : Եւ երկու կարգ հողերուն ու իրենց տեսակներուն վրայ, և թէ ինչպէս քարացած են ջրային հողերուն կարգերէն շատը, ուրիշ անգամ կը խօսինք :

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Ժամագրութիւն) :

(ԺԱՓՈՒԱՆ ԸՍՈՒԱԾ ԲԱՐԿԱՆՈՐ՝ ԿԵՆԴԱՆԵԱԳ ՄԵԿ ԵՏԱԿՆ Է, ԵՒ ԵՒԵՐԻԿԱՅԻ ՈՒ ՈՎԿԻԱՆԻԱՅԻ ՄԵՋ ԿՐԳՏՈՒԼԻ :

Եւս տեսակ կենդանեաց ընդհանուր անունով պարկաւոր ըսուելուն պատճառը ան է որ փորերնուն տակը պարկի պէս բացուածք մը ունին, և նոր ծնած ձագերնին խել մը ատեն աւնոր մէջ կը պահեն :

(ԺԱՓՈՒԱՆ ԳՐԵԹԷ ԲՈՒՐ ԿԵԱՆՔԸ ԾԱՌԵՐՈՒ ՎՐԱՅ ԿԱՆԳՐՆԷ, ԵՒ ԻՐԵՆ ԳՐԵԽԱԼՈՐ ԿԵՐԱԿՈՐՆ Է ՍՈՒՈՂ, ԲԱՅԳ ԹԱՆՈՒՆ՝ ՀԱԼԿԻԹ ՈՒ ՄԻՋԱՏՆԵՐ ԱՆԿՈՒՄԷ : ԿԵՐԱԿՈՐԸ ԳԻՂԵՐ ԱՏԵՆ ԿՈՒՄԷ, ԻՍԿ ԳՈՐԵԿՐ ԾԱՌԻ ՓՈՐՈՒԱԾՔՆԵՐՈՒ ԿԱՄ ԱՅՐԵՐՈՒ ՄԵՋ ԿՐԱՎԱՀՈՒՐԻ : ՈՒՐԻՉ ՊԱՐԿԱՆՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒՆ ՀԱՄԻՆ ՍԷՍ ԱՍԻԿԱՅ ԱՆ ԾԱՌԻ ՃԻԼՂԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԱՆԴԱԴԱՐ ԿԵՒԷ ԿԻՋՆԱՅ, ԲԱՅԳ շԱՐժՄՈՒՆՔԸ ԴԱՆԴԱՂ, ՈՒ ԲՆՈՒԹԵԱՄԲ ՂԳՈՒՀԱԼՈՐ Է : Եւսանկարծ վտանգ մը տեսածին պէս պոչը ծառին ճիւղերէն մէկուն կը պլլէ ու գրեխիվար կը կախուի անշարժ մեռած ձևանալով : Եւսկար ատեն նոյն դրբին մէջ կենալէն ետեւ՝ պոչը չգիմանար մարմնոյն ծանրութեանը, կը քակուի, ինքն ալ գետին կիցնայ :

Եւսստ քիչ կենդանի կայ որ մորթը ասոր մորթին պէս փափուկ ըլլայ, անոր համար խիստ յարգի է ՈՎԿԻԱՆԻԱՅԻՆ ՄԵՋ : Տեղացիք ասոր միսը շատ ախորժելով կուտեն . մորթէն ալ իրենց ձմեռուան հագուստ կը շինեն, որ փափուկ կը ըլլայ ու շատ տաք կը բռնէ : Եւ երկիրցոց մէջ ասանկ արարողութիւն մըն ալ կայ, որ երբ որ տղայ մը երիտասարդութեան հասակը մտնէ, թափուայի կաշին շինած տրեխ՝ կուտան իրեն . անով անկէ ետեւ կընայ ցեղին տարեց մար-

1 Լատիններէն Marsupialis.

2 Չորեք :